ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶՎԱՐԹՆՈՑ» ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆ

N 1-83

«05» 03 2026թ.

«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ-ի տնօրեն
Արայիկ Ստեփանյանին
ք.Երևան, Ռուբինյանց 31

Ծ Ա Ն Ու Ց Ում
պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025 թվականի հոկտեմբերի 2-ին կնքվել է «ԶԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/20» ծածկագրով «Նյութական արժեքների գնահատման» ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն Պայմանագրի 1.1 կետի՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Նյութական արժեքների գնահատման» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Համաձայն Պայմանագրի 2.1.3. կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՐՄ. ԹՌԱՍԹ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրի 2.1.3. կետի՝ ա) և բ) ենթակետերով սահմանված պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես՝ ներկայացված գնահատման հաշվետվությունը չի համապատասխանում «ԶԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/20» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրի և ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացնող պահանջները սահմանելու մասին» N 1355-Ն որոշման հավելված 1-ի պահանջներին:

ԶՎԱՐԹՆՈՑ
ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

0042 ք.Երևան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան,
նախկին ԲՍ համալիր թիվ 2
Էլ-փոստ: info@zamc.am, Վեբ կայք: www.zamc.am
Հեռ. (+374) 060 37 33 60, Ֆաքս: (+374) 060 37 33 60

2.1.3. կետի՝ բ) ենթակետի մասով՝ ծառայության մատուցման ժամկետն առ 04.03.2026 թվականը խախտվել է՝ 112 օրացուցային օրով:

Ելնելով ողջ վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 7.9 կետը՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պայմանագրի կատարման ապահովման գումարը, ինչը կազմում է 260 000 (երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 390 000 (երեք հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև Պայմանագրի 5.2. կետով նախատեսված և հաշվարկված տուգանքի գումարը՝ 10 345 (տասը հազար երեք հարյուր քառասունհինգ, հաշվարկը՝ 2 069 000 x 0.5%) ՀՀ դրամ, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 հաշվեհամարին և Ընկերությանը ներկայացնել վճարման անդորրագրերի պատճենները կամ դրանք տրամադրել info@zamc.am էլեկտրոնային փոստի հասցեով:

Նշված ժամկետում վերոնշյալ գանձապետական հաշվին ապահովումների գումարները չփոխանցելու դեպքում կձեռնարկվեն միջոցներ՝ միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների հիման վրա գանձումներն ապահովելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

ԶՎԱՐԹՆՈՑ
ԱՎԻԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

0042 ք.Երևան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան,
նախկին ԲՍ համալիր թիվ 2
Էլ.փոստ: info@zamc.am Վեբ կայք: www.zamc.am
Հեռ. (+374) 060 37 33 60 Ֆաքս: (+374) 060 37 33 60

բ) մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հարգանքով՝

Թաթուլ Հայրապետյան

Տնտեսագետ-գնումների մասնագետ
Տ.Հակոբյան
060 37 33 60 (514)